ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ **«Սերմերի և տնկանյութի մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին»** **ՀՀ օրենքների նախագծերի** **ընդունման**	
1.	**Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**
	Տնկանյութի հավաստագրման մասին օրենսդրության բացակայությամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում արտադրված տնկանյութը երբևէ չի հավաստագրվել: 1990-ական թվականներից սկսած հանրապետությունում բացակայում են գիտականորեն հիմնավորված (օրինակելի) տնկարանային տնտեսությունները և չի արտադրվում բարձրորակ ու արժանահավատ տնկանյութ: Սույն ոլորտը կարգավորող միջազգային օրենսդրության ուսումնասիրությունները և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետի դիտարկումները հաշվի առնելով առավել նպատակահարմար է «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (20 մայիս 2005 թվական) շրջանակներում կանոնակարգել նաև տնկանյութը՝ արտադրությունից մինչև օգտագործում: Բացի դրանից, առկա է վերոնշյալ օրենքում նաև այլ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն: Վերջին տարիներին նոր, հանրապետության բնակլիմայական պայմաններում չփորձարկված պտղահատապտղային բույսերի սորտերի ներմուծումը և դրանցով արտադրական այգիների հիմնումը, հավաստագրված տնկարանների կողմից ապրանքային բարձր որակով օժտված տնկանյութի արտադրության բացակայությունը, միաժամանակ ժամանակակից ինտենսիվ այգիների և հատապտղանոցների ծավալների շարունակական աճը մեծ անհրաժեշտություն և պահանջ են առաջացնում Հայաստանի Հանրապետությունում տնկանյութի հավաստագրման մասին օրենսդրության առկայության: Հանրապետության գյուղատնտեսության արդյունավետ զարգացման նպատակով կարևորվում է տեղական սերմնաբուծությունից և սերմարտադրությունից

բացի ունենալ նաև տեղական տնկարանային արտադրություն, որը կարող է երաշխավորել ոչ միայն պտղահատապտղային այգիների տարածքների ավելացումը, այլ նաև հնարավորություն կընձեռի տնկանյութի արտահանման համար: Տնկանյութի հավաստագրման գործընթացի իրականացման արդյունքում տնտեսավարողների կողմից այգեհիմնման նպատակով կատարված ներդրումները կլինեն արդարացված՝ շնորհիվ տնտեսական արդյունավետության պետական սորտափորձարկումների, հանրապետությունում կիրականացվի գիտականորեն հիմնավորված (օրինակելի) տնկարանային արտադրություն, հնարավորություն կստեղծվի արտադրել արժանահավատ և բարձրորակ տնկանյութ, որը կունենա հավաստագիր և կլինի մրցունակ:

Սույն օրենքի ընդունումը կհանգեցնի՝

1. **<u>Ինքնարժեքի նվազման</u>**

Համաձայն որոշ գնահատականների՝ ներմուծված տնկիների միջին գինը կազմում է 3500-4000 դրամ, իսկ տեղական արտադրության տնկիներինը՝ 1500-2000 դրամ: Բացի այդ, համաձայն տնկիների արտադրությամբ զբաղվող ընկերությունների գնահատականների՝ բարձր պահանջարկի պարագայում մասշտաբի էֆեկտի հաշվին տեղական արտադրության տնկիի միջին գինը կարող է նվազել լրացուցիչ շուրջ 500 դրամով՝ կազմելով միջինում 1000–1500 դրամ: Արդյունքում տեղական արտադրության տնկիների գինը կարող է ներմուծվածի նկատամբ **շուրջ 70%–ով նվազել**:

2. **<u>Ներմուծման փոխարինման</u>**

Տեղական արտադրության տնկիների ինքնարժեքի ցածր լինելը ավելացնում է տեղական տնկիների գնային մրցունակությունը ներմուծվածի համեմատ, հետևաբար կհանգեցնի մասնակի ներմուծման փոխարինման:

Համաձայն ՎԿ տվյալների՝ 2019 թվականին «0602 Խաղողի, ծառի, թփի շիվ և սածիլ» ապրանքի գծով ներմուծման ծավալը կազմել է 4064 տոննա կամ 13.4 մլն ԱՄՆ դոլար: Ուստի ներմուծման փոխարինման մասով ստացվող տնտեսական օգուտը կարող է կազմել **առավելագույնը շուրջ 13 մլն ԱՄՆ դոլար:**

3. **<u>Արտահանման ծավալների ավելացման</u>**

Համաձայն ԱՎԿ վիճակագրության՝ 2014–2019թթ. Ժամանակահատվածի համար տնկիների արտահնաման միջին տարեկան ցուցանշը կազմել է շուրջ 3400 տոննա կամ

	850 հազար ԱՄՆ դոլար: Ցածր գնի և բարձր որակի պայմաններում ակնկալվում է արտահանման ծավալների աճ դեպի ԵԱՏՄ շուկա, իսկ հավաստագրի առկայության պարագայում դեպի ԵՄ շուկաներ: Մասնավորապես, «Նորատունկ» ՓԲԸ–ի տվյալների՝ արտահանման ծավալները կարող են ավելացվել շուրջ 4 անգամ՝ կազմելով տարեկան 40–50 հազար տնկի: **4. <u>Բերքատվության և բերքի որակի բարձրացման</u>** Համաձայն միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների՝ երաշխավորվում է, որ միևնույն պայմանների պարագայում չհավաստագրված տնկանյութի նկատմամբ հավաստագրված տնկանյութի օգտագործումը կբարձրացնի բերքատվության ցուցանիշը 20–30%–ով, ինչը էական ազդեցություն կթողնի գյուղատնտեսության վրա: Բացի այդ, հավաստագրված տնկանյութի պարագայում ակնկալվում է որակապես առավել բարձր բերքի ստացում:
2.	**Առաջարկվող կարգավորումների բնույթը** Սույն օրենքով կկանոնակարգվի Հայաստանի Հանրապետությունում տնկանյութի արտադրության, վերարտադրության, հավաստագրման, փոխադրումների, պահպանության, իրացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:
3.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**
	Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամը, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը, Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը, «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամը:
4.	**Ակնկալվող արդյունքը**
	Հայաստանի Հանրապետությունում կկանոնակարգվի տնկարանային արտադրությունը և կարտադրվի հավաստագրված տնկանյութ, որը կնպաստի պտղահատապտղային այգիների ծավալների ավելացմանը և արտադրության արդյունավետության բարձրացմանը:
5	**Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ**

	այլ ռազմավարություններ
	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությամբ նախատեսված է գյուղատնտեսական ոլորտի մրցունակությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բարելավել սերմերի և տնակնյութի հավաստագրման համակարգը: Տնկանյութի հավաստագրման գործընթացի իրականացումը բխում է Կառավարության 2021-2026թթ. ծրագրի Գյուղատնտեսության ոլորտում կառավարության կողմից իրականացվող քաղաքականության նպատակներից՝ յուրաքանչյուր տարվա ընթացքում ինտենսիվ այգիներն ավելացնել 1000 հեկտարով և դրա կատարումն ապահովող միջոցառում է:
6.	**Հասարակությանը նախագծի մասին իրազեկումը**
	Նախագիծը տեղադրված է https://www.e-draft.am/ ինտերնետային կայքերում՝ հասարակությանն իրազեկելու նպատակով: